



«Տարիներ շարունակ բնապահպանությունը ստորադասվել է ճնշեսական շահին»

Նախարարը հավաստիացնում է, որ բնապահպանության ոլորտում առկա խնդիրների լուծման համար լուրջ բարեփոխումներ են սկսվել թե՛ օրենսդրական դաշտի փոփոխությամբ, թե՛ նոր մարմինների ձևավորմամբ, որոնք հնարավորություն կտան առավել լուրջ վերահսկողական ու կանխարգելիչ ծրագրեր իրականացնել: Անուսարի հանքի շահագործման վերաբերյալ քաղաքացիական հասարակության և բնապահպանական շարժումների մտահոգություններն ու բարձրացրած խնդիրներն՝ ըստ նախարարի, ոչ միշտ են «փաստարված ու հիմնավորված»: «Ես բազմիցս խնդրել եմ՝ տվեք այդ հիմքերը մեզ, որովհետև այս պահին առնվազն, երբ ծրագիրը սկսված չէ, այսինքն՝ ընդերքի շահագործումն սկսված չէ, չենք կարող կասեցնել ծրագիրը միայն այն բանի համար, որ ենթադրություններ կան», - ասում է նախարարը: Պատասխանելով հակադարձմանը, թե ինչպես են անհիմն, եթե միջազգային փորձագետների կողմից իրականացվել է այլընտրանքային փորձաքննություն, բացահայտելով լուրջ ռիսկեր, նախարարը տեղեկացրեց, որ հենց այդ փորձաքննությունն իրականացրած միջազգային մասնագետների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ տարվա

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը Factor.am-ի հետ հարցազրույցում անդրադառնում է հայաստանյան բնապահպանական հիմնախնդիրներին, իրավական դաշտում առկա թերություններին ու քաղաքականությանը, որոնց հետևանքով «տարիներ շարունակ բնապահպանությունը ստորադասվել է տնտեսական շահին»:

հունվարին հանդիպել և մանրամասն քննարկել առկա մտահոգություններն ու ռիսկերը. «Երբեք որևէ մեկի մտքով թող չանցնի, որ բնապահպանության նախարարը պաշտպանում է որևէ տնտեսվարողի շահը, կամ որևէ մեղ խմբային շահեր, նախ՝ որովհետև Սահմանադրությունն ու օրենսդրությունն է պարտավորեցնում բնապահպանության նախարարին առաջնորդվել շրջակա միջավայրի պահպանությամբ, երկրորդ՝ կարևոր խնդիրը հետևյալն է. ճշմարտության և իրականության համադրում պետք է լինի: Կիկոսի մահն ու Նյու Վասյուկիի որակի չափազանցություններն ընդունելի չեն, պնդում է նախարարը. Անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և պատկերացումների բացակայությունը բերում է նրան, որ հաճախ չհիմնավորված պնդումներ էլ են արվում: Մի կողմից լավ է, որ քաղաքացիներն ակտիվ են, բայց չափազանց կարևոր է, որ ամեն ինչ լիարժեք տեղեկատվության պայմաններում արվի»:

Գայանե Աբրահամյան

Հարցազրույցի տեսագրությունը կարող եք դիտել նշված հղումներով www.factor.am և Բնապահպանության նախարարության www.mnp.am կայքում

Ջրային ոլորտի կառավարման բնագավառում հասնելու ենք լավագույն արդյունքների



Բնապահպանության նախարար Արծվիկ Սինասյանն ընդունել է «Արևելյան համագործակցության Եվրոպայի ջրային նախաձեռնություն պլուս» (EUWI+) Եվրոպայի անդամ երկրների կոնսորցիում ծրագրի ղեկավար Մայքլ Սուտերին: Հանդիպմանը մասնակցել են նաև ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական Վահագն Խաչատրյանը, «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Սիմոն Պապյանը, Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության պետ Վահան Դավթյանը և այլ ստորաբաժանումների ղեկավարներ: Հանդիպման նպատակն էր քննարկել մեկնարկող EUWI+ ծրագրի բաղադրիչները: Ողջունելով հյուրին և կարևորելով առաքելությունը, որով վերջինս ժամանել է Հայաստան՝ նախարար Արծվիկ Սինասյանը նշել է, որ ՀՀ կառավարությունը, մասնավորապես՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը ձգտում է ջրային ոլորտի կառավարման բնագավառում հասնել լավագույն արդյունքների և այդ առումով կարևորել է դրան ուղղված Եվրամիության աջակցության ծրագիրը: Բնապահպանության նախարարը մեկնարկող ծրագիրը դիտարկել է նույնքան ամսին Հայաստան-ԵՄ ընդլայնված և համապարփակ համաձայնագրի ստորագրման համատեքստում, որում շրջակա միջավայրի պահպանությունը և հատկապես ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումն առանցքային հարցեր են: Նախարար Արծվիկ Սինասյանը նշել է, որ ոլորտում իրականացվում են նաև այլ աջակցության ծրագրեր և խնդիր կա դրանք համադրել մեկ ամբողջության մեջ՝ ծրագրից առավելագույն արդյունք ստանալու համար: Դրա համար անհարժեշտ է դիտարկել ջրային ոլորտի բոլոր բաղադրիչները՝ հաշվառուման, գնահատման, մոնիթորինգի կարողությունների հզորացումը, կատարյալ ջրավազանային կառավարման պլանների մշակումը, Սևանա լճի ինքնատիպ և արժեքավոր ջրային էկոհամակարգի պահպանությունը, ձկնաբուծական տնտեսությունների համար Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ավազանից տարեկան մոտ 800 մլն մա ծավալը ոռոգման երկրորդական նպատակով օգտագործման անհրաժեշտությունը, ջրատար համակարգերի կատարելագործումը: Մայքլ Սուտերը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նկատել է, որ ծրագիրը ԵՄ արևելյան գործընկերության երկրների շրջանակներում է իրականացվում և համդիսանում է նախորդ ծրագրերի շարունակությունը: Նախորդ ծրագրերը իրականացրել են մի-

ջազգային խորհրդատվական կազմակերպությունները՝ հատկացնելով տեխնիկական աջակցություն, այս դեպքում Եվրամիության երկրներն են դրանք իրականացնում, որպես երկրների միջև գործընկերային հարաբերություն: Եվրոպայի անդամ երկրների կոնսորցիում ծրագրի ղեկավարը նախապատրաստական փուլում հայկական կողմի հետ համագործակցության մակարդակը բարձր է գնահատել, ինչը կնպաստի ծրագրի արդյունավետ իրականացմանը՝ հավելելով, որ ծրագիրն այս փուլում ճկուն է և նախատեսված բյուջեն ըստ երկրի պահանջների կարող է վերանայվել: Հանդիպման ավարտին նախարարը շեշտել է, որ շահագրգռված է ծրագրի արդյունավետ իրականացման մեջ, որպեսզի այն ապահովի նմանատիպ ծրագրերի շարունակականությունը և օրինակելի լինի այլ երկրների համար:

Տեղեկանք

Ծրագիրը գործում է 2016թ. սեպտեմբերից: Այն ուղղված է աջակցելու Հայաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի և Մոլդովիայի ջրային ռեսուրսների և անդրսահմանային գետերի կառավարման բարելավմանը:

«EUWI+» ծրագիրը իրականացվում է OECD, UNECE, Ավստրիայի շրջակա միջավայրի գործակալության և Ֆրանսիայի Ջրի միջազգային գրասենյակի կողմից: 2016-2020 թթ. համար պլանավորվել է գործողությունների որոշակի ծրագիր:

EUWI+ համագործակցության շրջանակներում առավել կարևորվում են հետևյալ 5 թեմաները:

1. Օրենսդրության, քաղաքականության մշակման և ինստիտուցիոնալ ամրապնդում,
2. Լաբորատոր և մոնիթորինգային համակարգերի ամրապնդում,
3. Գետային ավազանի կառավարման պլանի մշակում,
4. Գետային ավազանի կառավարման պլանի իրականացում,
5. Հանրային իրազեկվածության, հաղորդակցության և տեղեկատվության կառավարում:

Եվրոպայի անդամ երկրների կոնսորցիումը պատասխանատու է 2-5 թեմաների իրականացմանը: Այս ծրագրերի իրականացման բյուջեն 6 երկրների համար կազմում է մոտ 25 մլն եվրո, որը ֆինանսավորվելու է Եվրամիության, Ավստրիայի և Ֆրանսիայի կառավարությունների կողմից: Բյուջեի մոտավորապես 1/6 հատկացվելու է Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանում օզոնափայփայիչ նյութերի գործածման մակարդակի կրճատումը 15%-ով



Մեկնարկում է դրամաշնորհային հերթական ծրագիրը



Օրերս տեղի ունեցավ ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի /ՄԱԶԾ-ի/ միջև «Հիդրոքլորֆտորածխածինների փուլալից փոխարինում» 2-րդ փուլի ծրագրի ստորագրում, որի բյուջեն կազմում է 129,6 հազար ԱՄՆ դոլար: Ստորագրմանը նախորդած ողջույնի խոսքում Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, տեղեկացրել է, որ այս տարի նշվում է «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության 30 ամյակը և շեշտել, որ 1999 թվականից սկսած՝ Հայաստանի Հանրապետությունը կատարում է իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, երբեմն նաև՝ առաջանցիկ տեմպերով: Հայտնելով, որ մեկնարկող միջոցառումները նույնպես վերաբերում են ստանձնած պարտավորությունների շրջանակում ըստ ժամանակացույցի օզոնաքայքայիչ նյութերի փոխարինմանը՝ բնապահպանության նախարարը նշել է. «Ծրագրի առաջին փուլն իրականացվել է 2010-2016 թվականների ընթացքում ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի հետ համատեղ՝ ապահովելով Հայաստանում օզոնաքայքայիչ նյութերի գործածման մակարդակի կրճատումը 15%-ով: Ծրագրի երկրորդ փուլը ուղղված է լինելու 2020 թվականի դրությամբ այդ նյութերի գործածման մակարդակի կրճատմանն արդեն 66,6 %-ով»:

ՀՀ բնապահպանության նախարարը բարձր է գնահատել ՄԱԶԾ-ի հետ համագործակցությունը և համոզմունք հայտնել, որ մեկնարկող ծրագրի շրջանակներում շարունակվող համագործակցությունը նույնպես կլինի բեղմնավոր:

ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիասինը, շեշտելով, որ Հայաստանը օզոնաքայքայիչ

նյութերի գործածման մակարդակի կրճատման գործընթացներում առաջատարի դեր է ստանձնել, բարձր է գնահատել այդ ուղղությամբ գործածվող ջանքերը: Ծրագիրը ստորագրել են ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը և ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ Դմիտրի Մարիասինը:

Օզոնի ազգային կենտրոնի համակարգող Լիանա Ղահրամանյանը ներկայացրել է ծրագրի մանրամասները, որով նախատեսվում է Օզոնաքայքայիչ նյութերի ապօրինի առևտրի կանխարգելման և կառավարման հարցում երկրի տեխնիկական զինվածության բարելավում, միջին մասնագիտական հաստատությունների մասնագետների պատրաստման համար հզորությունների կատարելագործում. երկրի սառեցման և օդորակման ոլորտում սպասարկման հզորությունների ամրապնդում՝ ձեռք բերելով օզոնաանվտանգ եղանակով տեխնիկայի սպասարկման համար անհրաժեշտ գործիքների 25 հավաքածու: Ծրագրի արդյունքում ակնկալվում է ունենալ տեխնիկապես հագեցված 4 մաքսակետ, որոնց աշխատակիցները կկարողանան կանխարգելել օզոնաքայքայիչ նյութերի ապօրինի առևտուրը, միջին մասնագիտական հաստատություններ, որոնք՝ տեխնիկապես զինված լինելով պատրաստ կլինեն հյուրընկալել իրենց մոտ երիտասարդներին և սովորեցնել սառեցման և օդորակման տեխնիկայի տեղադրման և սպասարկման ժամանակակից մեթոդներն ու աշխատելաճը և 25 մասնագետ կամ մասնագիտական ընկերություններ, որոնք կկարողանան օզոնաանվտանգ եղանակով սպասարկել սառեցման և օդորակման տեխնիկան՝ ապահովելով սարքավորումների մեջ պարունակվող նյութերի կրկնակի օգտագործում:

Մեր երկիրը ներկայացնող Լուսինե Թորոսյանի լուսանկարը «Օզոնային շերտի դաշտայնություն» անվանակարգում արժանացել է առաջին դասավոր ժողովին



Հայաստանի Հանրապետության օզոնի հարցերով ազգային համակարգող Լիանա Ղահրամանյանը ընտրվել է Վիեննայի կոնվենցիայի կողմ երկրների 11-րդ հանդիպման համանախագահ:

2017 թվականի նոյեմբերի 20-ից 24-ը Մոնրեալում կայացել է «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի կողմ երկրների համաժողովի տասնմեկերորդ և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ երկրների քսանիններորդ հանդիպումը: Այս երկու միջազգային համաձայնագրերը թերևս ամենահաջողվածներն են, քանի որ վավերացված են ՄԱԿ-ում գրացնված բոլոր 197 երկրների կողմից: Միջազգային հանրության միահամուռ ջանքերի շնորհիվ ողջ աշխարհում արդեն հաջողվել է կրճատել օզոնաքայքայիչ նյութերի շուրջ 99%: Կայացած հանդիպումն առանձնահատուկ էր նրանով, որ այս տարի նշվում է Մոնրեալի արձանագրության 30 ամյակը: Շատ խորհրդանշական է, որ հենց այդ հանդիպման ընթացքում պաշտոնապես հայտարարվեց, որ արձանագրության ջերմոցային զագեր հանդիսացող հիդրոֆտորածխածիններ կարգավորող Կիզալիի ուղղումն արդեն վավերացվել է 21 երկրների կողմից, ինչն անհրաժեշտ էր ուղղումն ուժի մեջ մտնելու համար: Հանդիպման 4-րդ օրը տեղի է ունեցել նախարարական կլոր սեղան՝ նվիրված Մոնրեալի արձանագրության 30 տարվա ձեռքբերումներին և ապագա ծրագրերին: Կլոր սեղանին մասնակցել են Կանադայի, Էստոնիայի, Գվատեմալայի, Մալդիվների, Ռուանդայի և Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտի պետական մարմինների ներկայացուցիչներ՝ նախարարների կամ նախարարների տեղակալների մակարդակով, ինչպես նաև ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի գործադիր տնօրեն Էրիկ Սոլիայնը: Կլոր սեղանի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը ներկայացրել է Հայաստանում Մոնրեալի արձանագրության իրականացմանը նպաստող կարևորագույն նվաճումները, արձանագրության իրականացումից քաղված դասերը և դրանք այլ բնապահպանական խնդիրների լուծման համար կիրառելու հնարավորությունները, ինչպես նաև օզոնային շերտի ուսումնասիրությունների կայունությունն ապահովելու հնարավոր ուղիները ու Մոնրեալի արձանագրության իրականացման հաջող քայլերը: Հանդիպման առաջին օրվա ավարտին տեղի է ունեցել Մոնրեալի արձանագրության 30-րդ ամյակին նվիրված Օզոնի հանդիսավոր մրցանակաբաշխությունը 8 անվանակարգերով: Հայաստանի Հանրապետության Օզոնի ազգային կենտրոնը «Կրեատիվ աշխատանք երիտասարդների հետ» անվանակարգում արժանացավ «Օզոնային շերտի պահպանության» մրցանակի՝ դառնալով որևէ մրցանակի արժանացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային ցանցի միակ երկիրը: Այդ գործում իր մեծագույն նպաստն ունեցավ ՄԱԱԶԿ-ի կողմից իրականացված Օզոնի ազգային կենտրոնի ինստիտուցիոնալ ուժեղացման ծրագիրը, որը տարիներ շարունակ աշխատել է դպրոցականների հետ՝ տալով գիտելիքներ օզոնային շերտի պահպանության ոլորտում՝ նրանց մեջ բարձրացնելով իրազեկվածությունը: Հանդիպման ընթացքում Հայաստանի Հանրապետության օզոնի հարցերով ազգային համակարգող Լիանա Ղահրամանյանը ընտրվել է Վիեննայի կոնվենցիայի կողմ երկրների 11-րդ հանդիպման համանախագահ: Հանդիպման ընթացքում տեղի էր ունեցել Ուզբեկիստանի ՄԱԶԾ գրասենյակի կողմից կազմակերպված կլիմայի փոփոխությանը և օզոնային շերտի պահպանությանը նվիրված միջազգային լուսանկարչական մրցույթի հաղթողների աշխատանքների ցուցահանդեսը: Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող Լուսինե Թորոսյանի լուսանկարը «Օզոնային շերտի պահպանություն» անվանակարգում արժանացել է առաջին պատվավոր տեղին: Այսուհետ Լուսինեի աշխատանքը կախված է լինուլու Մոնրեալի արձանագրության իրականացման համար ստեղծված Բազմակողմանի հիմնադրամի գործադիր քարտուղար Էդուարդո Գանենի աշխատանքակազմում:



CNF-ի գործադիր սնօրենի հետ ֆննարկվել են դրամաճնորհային միջոցների սնօրինման հիմնական ուղղությունները

Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանն ընդունել է Կովկասի բնության հիմնադրամի (CNF) գործադիր տնօրեն Ջորջ Ջակոմինիին և ազգային համակարգող Արման Վերմիշյանին: Հանդիպմանը մասնակցել են նաև Նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանը, աշխատակազմի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը, պաշտոնատար այլ անձինք և ստորաբաժանումների ղեկավարներ: Ողջունելով հյուրերին Արծվիկ Մինասյանը տեղեկացրել է, որ հերթական միստում ՀՀ կառավարությունը հաստատել է «Անտառային ոլորտի բարեփոխումների հայեցակարգին, ռազմավարությանը և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին որոշման նախագիծը», որով անտառային ոլորտում իրականացվող քաղաքականության վարումը վերապահվել է ՀՀ բնապահպանության նախարարությանը: Բնապահպանության նախարարը կարևորել է CNF –ի հետ համագործակցության ընդլայնումը, որի մանդատի մեջ է մտնում բնության հատուկ պահպանվող տարածքներին աջակցությունը՝ նշելով, որ առաջիկայում ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ընդգրկվելիք «Հայամտառ» ՊՈԱԿ-ի հսկողության տակ գտնվող անտառներում առկա է 13 հատուկ պահպանվող տարածք և վերջիններիս կարողությունների հզորացումը նույնպես առաջնային խնդիր է: Կողմերը քննարկել են 2017 թվականին համատեղ իրականացված ծրագրերի ընթացքը, արձանագրված արդյունքները, ինչպես նաև 2018 թվականին ՀՀ կառավարության կողմից ԲՀՊՏ-ների կառավարման համար նախատեսված ֆինանսավորման չափը և այդ ուղղությամբ Կովկասի բնության հիմնադրամի նախատեսած դրամաշնորհային հատկացումների հիմնական ուղղությունները: ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, կարևորելով բնության հատուկ պահպանվող տարածքներում վարվող քաղաքականության լիարժեք իրականացումը և վերջիններ-



րիս կարողությունների զարգացման նպատակով հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհների օգտագործման արդյունավետության բարձրացումը, առաջնային է համարել բոլոր ԲՀՊՏ-ների համար միասնական մոտեցման իրականացումը և այդ նպատակով առաջարկել վերանայել CNF –ի հետ ունեցած շրջանակային համաձայնագիրը, ինչն արժանացել է Ջորջ Ջակոմինիի հավանությանը: Կողմերը պայմանավորվել են սեղմ ժամկետներում այդ ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկել: Կովկասի բնության հիմնադրամի (CNF) գործադիր տնօրենի խնդրանքով նախարար Արծվիկ Մինասյանը ներկայացրել է բնության հատուկ պահպանվող տարածքներում ապօրինի ծառահատումների դեպքերի բացահայտման և դրանց կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ընթացքը՝ առաջարկելով հիմնադրամի կողմից ԲՀՊՏ-ների ընթացիկ ծախսերի համար նախատեսված դրամաշնորհային միջոցներից գատ, դիտարկել նաև անվտանգության տեխնիկական միջոցների ձեռքբերման նպատակով այլ գումարներ ներգրավելու հնարավորությունը: 2017 թվականին արձանագրված անտառային հրդեհների աննախադեպ մեծ թվով դեպքերի համատեքստում՝ կողմերը քննարկել են նաև արդեն առաջիկա ամսում ԲՀՊՏ-ները հակահրդեհային անհրաժեշտ սարքավորումներով ապահովելու հարցերը: Նախարար Արծվիկ Մինասյանի առաջարկով՝ Կովկասի բնության հիմնադրամի (CNF) գործադիր տնօրենը համագործակցության առանձին հարցերը քննարկել է նաև նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի հետ:

Վնասի չափը կազմել է շուրջ 60 մլն. ՀՀ դրամ

ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ս.թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված ստուգումների, շրջայցերի, Տեսչական մարմնին հանձնված վարչական վարույթի քննության, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունների ընդունման գործընթացում հայտնաբերվել և արձանագրվել է թվով 33 իրավախախտում, 29-ի (12-ը՝ նախկինում հայտնաբերված) վերաբերյալ անցկացվել է վարչական վարույթի քննություն և նշանակվել 2.360.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Վերոնշյալ ժամանակահատվածում բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է՝ 59.208.884 ՀՀ դրամ:

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 21 դեպք: Քննված վարչական վարույթներով նշանակվել է 1.650.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 59.158.884 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Լոռի՝ հայտնաբերված ապօրինի ծառահատման 3 դեպքով (6 բոխի, 3 հաճարենի և 564 սոճենի) հաշվարկվել է 57.672.800 ՀՀ դրամի չափով և վառելափայտի ապօրինի տեղափոխման 5 դեպքով (23,87 խմ փայտանյութ) 814.300 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից 3 դեպքի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին: Տավուշ՝ հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 7 դեպքով (13,93 խմ փայտանյութ) հաշվարկվել է 202.584 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից 3 դեպքի վերաբերյալ նշանակվել է 100.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 300.000 ՀՀ դրամ: Կոտայք՝ հայտնաբերված ապօրինի ծառահատման 2 դեպքով (2 բարդի, 2 կաղնի, 1 հացենի) նշանակվել է 100.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 200.000 ՀՀ դրամ և վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով (2,3 խմ փայտանյութ) հաշվարկվել է 82.800 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և նշանակվել 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Արագածոտն՝ հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 2 դեպքով (5,4 խմ փայտանյութ) հաշվարկվել է 194.400 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և նշանակվել 100.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 200.000 ՀՀ դրամ, որոնց վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավապահ մարմիններին: Արարատ՝ հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքի (1 խմ փայտանյութ) վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթը գտնվում է քննության ընթացքում:

Նախկինում հայտնաբերված իրավախախտում՝ Լոռի՝ հայտնաբերված ապօրինի ծառահատման 5 դեպքով նշանակվել է 450.000 ՀՀ դրամի չափով և վառելափայտի ապօրինի տեղափոխման 1 դեպքով նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Արարատ՝ հայտնաբերված վառելափայտի ապօրինի տեղափոխման 3 դեպքով (3 խմ փայտանյութ) հաշվարկվել է 108.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և նշանակվել 100.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 300.000 ՀՀ դրամ: Արմավիր՝ հայտնաբերված ապօրինի ծառահատման 1 դեպքով հաշվարկվել է 84.000

ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և նշանակվել 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ Արձանագրվել է իրավախախտման 2 դեպք: Քննված վարչական վարույթներով կայացվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 50.000 ՀՀ դրամի չափով՝

Կենդանական աշխարհի պահպանության ոլորտ

Կոտայք՝ հայտնաբերվել է ձկան ապօրինի որսի 2 դեպք (առգրավվել է 22 կգ «սիգ» տեսակի ձուկ, որը հանձնվել է Արմվյան քաղաքի «Նարեկ» ծերանոց): Նախկինում հայտնաբերված իրավախախտում՝ Վայոց ձոր՝ հայտնաբերված ձկան ապօրինի որսի 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Մթնոլորտային օդի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ Արձանագրվել է իրավախախտման 4 դեպք:

Մթնոլորտային օդի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ

Քննված վարչական վարույթներով նշանակվել է 280.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել 50.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, որից՝ Երևան՝ հայտնաբերված շինարարական հրապարակի չպատսպարման և սորուն նյութերի չպահեստավորման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 150.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, իսկ առանց անթափանց ծածկոցի շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ վարչական իրավախախտման վարույթը գտնվում է քննության ընթացքում:

Արագածոտն՝ հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի և շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Շիրակ՝ հայտնաբերված հողի բերրի շերտի օգտագործման կարգի խախտման 1 դեպքի վերաբերյալ հաշվարկվել է 50.000 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս և նշանակվել 30.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Նախկինում հայտնաբերված իրավախախտում՝ Արագածոտն՝ հայտնաբերված առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի և շինարարական աղբի տեղափոխման 1 դեպքի վերաբերյալ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Ընդերքի պահպանության ոլորտ

Արձանագրվել է իրավախախտման 1 դեպք: Քննված վարչական վարույթով կայացվել է վարչական տուգանքի 1 որոշում՝ 80.000 ՀՀ դրամի չափով՝ Գեղարքունիք՝ հայտնաբերվել է ապօրինի արդյունահանված բազալտի տեղափոխման 1 դեպք՝ նշանակվել է 80.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Բնապահպանական և բնօգտագործման վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները սահմանված ժամկետում չեն ներկայացնելու համար Կայացվել է վարչական տուգանքի 5 որոշում՝ 300.000 ՀՀ դրամի չափով, որից՝ Լոռի՝ 2 տնտեսվարողների նկատմամբ համապատասխանաբար նշանակվել է 50.000 և 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 150.000 ՀՀ դրամ: Գեղարքունիք՝ 3 տնտեսվարողների նկատմամբ նշանակվել է 50.000-ական ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, ընդամենը՝ 150.000 ՀՀ դրամ: Նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 1.007.000 ՀՀ դրամ:

Պարզաբանում



«Ժողովուրդ» օրաթերթի նույն 30-ի 185/1567/ թողարկման մեջ հրապարակված «Օրինագիծ՝ ընդդեմ գետերի» վերտառությամբ հողվածում հրապարակվել է տեղեկատվություն, ինչը չի համապատասխանում իրականությանը և օրենքի նախագծի դրույթների թյուրըմբռնման արդյունք է: Հողվածագիրն իր նյութը կառուցել է այն պնդման վրա, թե ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնած «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով թույլատրվում է փոքր ՀԷԿ-եր կառուցել «բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրակրհամակարգերի սանիտարական պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ»: Իրականում ՀՀ բնապահպանության նախարարության մշակած օրենքի նախագծով նախատեսվում է ճիշտ հակառակը՝ վերոհիշյալ հատվածներում արգելել փոքր ՀԷԿ-երի կառուցումը: Փոքր ՀԷԿ-երի կառուցման մերժումը վերաբերում է 1-ին հողվածի ոչ միայն 1-ին, այլ նաև 2-րդ կետերով սահմանված դեպքերին: Հողվածի հեղինակին առաջարկում ենք մեկ անգամ ևս ուշադիր կարդալ օրենքի նախագիծը, որը կցվում ենք ստորև:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հողված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 30.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով:

թյամբ նոր մասով.

«Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են, եթե՝

1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝

ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր.

բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է:

Սույն մասով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝

ա. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,

բ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,

գ. ջրակրհամակարգերի սանիտարական պահպանման գոտիներում,

դ. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,

ե. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,

զ. անտառային տարածքներում, որոնք կարող են հատվել շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելիս:

Սույն մասով նախատեսված սողանքային տարածքները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Դաշա անունով արջին տեղափոխեցին իր ընկերների մոտ



«ԷԼԻՏ ՇԱՆԹ» ՍՊԸ-ի տնօրինությունը, տեղեկանալով ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում անազատության մեջ պահվող արջերին առավել բարվոք պայմաններով տարածք տեղափոխելու գործընթացի մասին, դիմել էր Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին, ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Ջանիբեկյան փողոցի թիվ 2 հասցեում

գտնվող ռեստորանային համալիրի տարածքում պահվող արջը տեղափոխելու խնդրանքով: Դեկտեմբերի 4-ին ժամը 11.00-ին, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի և «ԷԼԻՏ ՇԱՆԹ» ՍՊԸ-ի եռակողմ համաձայնությամբ, Կենդանաբանական այգու համապատասխան մասնագետները, արջին նախապես քնեցնելով, ՀՀ ԱԻՆ աշխատակիցների աջակցությամբ 11 տարեկան Դաշա անունը կրող արջին տեղափոխեցին Երևանի կենդանաբանական այգի, որտեղ արջը կմնա մինչև կարանտինային շրջանի ավարտը, ինչից հետո մասնագետները կորոշեն նրա հետագա ճակատագիրը:

Հիշեցնենք, որ Տեսչական մարմնի Երևանի տարածքային ստորաբաժանման աշխատակիցների կատարած շրջային արդյունքում պարզվել էր, որ «ԷԼԻՏ ՇԱՆԹ» ՍՊԸ-ի տարածքում գտնվող արջի պահման պայմանները համապատասխանում են ՀՀ կառավարության 26 հունիսի 2009 թվականի N 725-Ն որոշմամբ սահմանված պահանջներին:

Կայացել է փմիական նյութերի ոլորտին առնչվող հերթական աշխատաժողովը



Նոյեմբերի 13-14-ը Երևանի «Բեսթ Վեսթերն Կոնգրես» հյուրանոցում «Հայաստան/ՅՈՒՆԵՊ գործընկերություն Հայաստանում քիմիական նյութերի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման և արդյունաբերության ներգրավման» ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել ուսուցողական աշխատաժողով՝ «Ձեռնարկությունների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումներ, մասնավոր հատվածի մասնակցություն՝ շուկայում քիմիական նյութերի տեղակայումը կանոնակարգող նոր պահանջների կատարմանն աջակցելու նպատակով» խորագրով: Աշխատաժողովին մասնակցել են քիմիական նյութերի ոլորտին առնչվող շահագրգիռ գերատեսչությունների, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի քիմիական տեխնոլոգիաների և բնապահպանական ճարտարագիտության ֆակուլտետի դասախոսները, ինչպես նաև քիմիական արտադրությամբ զբաղվող փոքր և միջին ձեռնարկությունների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի պետ Անահիտ Ալեքսանդրյանը ներկայացրել է քիմիական նյութերի և թափոնների ոլորտը կարգավորող օրենսդրությունը, իսկ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի փորձագետ Բեատրիս Ֆերնանդեսը «ՅՈՒՆԵՊ-ի մոտեցումը պատասխանատու արտադրությանը» զեկույցով ներկայացրել է պատասխանատու արտադրության ձեռնարկը:

Աշխատաժողովի ընթացքում կատարվել են նաև խմբակային վարժություններ՝ նվիրված քիմիական նյութերի գույքագրմանն ու տեխնոլոգիական գործողությունների հաջողականությանը, ռիսկերի բացահայտմանն ու վտանգավոր «թեժ» կետերի քարտեզագրմանը, քիմիական վտանգների (սպառնալիքների) և փոխկապակցված ներգործության հարցերով արձագանքման պլանի մշակմանը:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտահանաշողական և էկոճանաչողական գործունեությունը անցնող տարում

Տարվա ընթացքում մեր թերթը պարբերաբար արտացոլել է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ծավալած գործունեության առանձին ուշագրավ դրվագները, որոնք արժանի են ամենաբարձր գնահատականի և հիացմունքի: Այս հրապարակմամբ մենք կփորձենք իմի բերել ամբողջը:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը ծավալում է բազմաբովանդակ գործունեություն, հիմնական գործունեությունից բացի (գիտություն, պահպանություն, խնամք) տարիներ շարունակ անցկացրել է էկոճանաչողական և գիտահանաչողական միջոցառումներ, արժևորելով հասարակության իմացությունը և գիտելիքի ձեռքբերումը դեպի բնություն և բնապահպանական գործունեություն: Համագործակցում է միջառք կրթահամալիրների՝ «Մխիթար Սեբաստացի», «Փոքրիկ Իշխան», «Շահամիր Շահամիրյան», «Խելացիների տուն» ուսումնական կենտրոնների և այլ դպրոցների հետ: Պատահական չէ, որ միջոցառումները մեծավ մասամբ անցկացվում են դպրոցահասակ երեխաների հետ, ինչը կարևորվում է Կազմակերպության կողմից այդ տարիքում կենդանի բնությունը

ճանաչելու և հարստացնում գիտելիքի պաշարը բնության գործած հրաշալիքների մասին: Կազմակերպությունը կնքված պայմանագրեր ունի հայաստանյան ԲՈՒՀ-երի, մասնավորապես ԵՊՀ և ՀԱԱՀ հետ: Շուրջ 10 տարի է, ինչ համագործակցում է ՀԱԱՀ-ի Ազոնոմիական ֆակուլտետի 1-4-րդ կուրսի ուսանողների հետ, վերջիններս ուսումնաճանաչողական պրակտիկան անց են կացնում «Ջրվեժ» անտառապարկում, որը հանդիսանում է պարկայինության տիպիկ օրինակ: ԵՊՀ-ի և Կազմակերպության միջև կնքված պայմանագրի շրջանակներում հաստատության ուսանողները իրենց ուսումնաարտադրական (նախադիպլոմային) պրակտիկան անցկացնում են հատկապես այս կազմակերպությունում, որտեղ ընտրվում են նաև թեմաներ ՀՀ ԲՀՊՏ-ների վերաբերյալ, ինչը թույլ է տալիս ուսանողին համապատասխան գիտելիքների ձեռքբերման և վեջնական աշխատանքների ճշգրիտ և լիարժեք կատարման համար:

• «Արգելոցադարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտաճանաչողական և էկոճանաչողական գործունեությունը անցնող տարում

Սկիզբը էջ 8 /

Այս տարվանից էկոկրթական և գիտաճանաչողական աշխատանքները տարվում են նոր մոտեցմամբ, որն ընդլայնելով իր աշխատանքները մեծացնում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող ԲՀՊՏ-ներում և դենդրոպարկերում անցկացվող միջոցառումների շղթան: Կազմակերպության գիտության բաժնի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ համատեղ «Էրեբունի» պետական արգելոցում տեղի ունեցավ հանդիպում ճապոնիայից Հայաստան այցելած Յամագուչի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Կեն-չի Տաննոի և իր գիտական խմբի հետ: Երկու կողմերի միջև ձեռք բերվեց հետագա համագործակցությունը խորացնելու նախնական պայմանավորվածություն: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության անմիջական մասնակցությամբ և օժանդակությամբ Բերդի «Սորաններ» դենդրոպարկում օգոստոսի 12-13-ին նշվեց ամենամյա «Ձագի», «Մեղրի և հատապտուղների» փառատոնները, ինչը ավանդույթ է դարձել 2012 թ.-ից ի վեր: Մասնակիցները ներկայացնում են «Շամշադինի մեղրը և հատապտուղները» դրանցից պատրաստված սննդամթերքների հետ միասին, ինչով էլ պայմանավորված է տարեցտարի մասնակիցների թվի ավելացումը՝ իրենց մթերքների յուրահատուկ ներկայացման և տեսակային կազմի ավելացման գործում: «Մեղրի և հատապտուղների» փառատոնի նպատակն է խթանել տարածաշրջանում նախատեսված ծրագրերի իրականացմանը, որն ասես, ընդգծում է տեղանքի առանձնահատուկ դերն ու նշանակությունը, որպես մեղրի և հատապտուղների արտադրության կենտրոնի, որն էլ իր հերթին կարող է լրջորեն նպաստել տուրիզմի և տեղական համայնքներում տուրիստական ենթակառուցվածքների զարգացման գործին: Եվ պատահական չէ, որ բերքի փառատոնը նշվում է բերքի կամ խաղողի հատուկացման հետ մեկտեղ, երբ մարդիկ տոնում են խաղողօրհները, ինչին հաջորդում է տոնական համերգը: Հաջորդ ուշագրավ ձեռնարկը նվիրված էր Օզոնային շերտի պահպանության միջազգային օրվան: Միջոցառման մեկնարկը տրվեց սեպտեմբերի 14-ին և շարունակվեց ներառյալ սեպտեմբերի 15-ը: Միջոցառումը կայացավ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ, որի սկսվել էր Հայաստանի Բնության պետական թանգարանից և շարունակվեց նախարարության «Արգելոցապարկային համալիրի» ենթակայության ներքո գտնվող «Սոճուտ» դենդրոպարկում: Այստեղ կազմակերպվեց նաև կլոր սեղան, որին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրված բնապահպանական կոնվենցիաների ազգային համակարգողները և ՀՀ ԲՆ ստորաբաժանումները ներկայացնող 25 աշխատակիցներ: Միջոցառմանը հաջորդեց բաց-դաս բնապահպանական թեմաներով, որին մասնակցում էին դենդրոպարկի հարակից տարածքի թվով 150 աշակերտներ, որի նպատակն էր հարստացնել աշակերտների գիտելիքները շրջակա միջավայրի, ինչպես նաև մեր երկրի բնապահպանակա հիմնախնդիրների և նրանց հնարավոր լուծման վերաբերյալ: «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումը այս տարի նշվեց սեպտեմբերի 30-ին՝ Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում, միջոցառմանը մասնակցում էին Հա-

յաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար՝ Պյոտր Սվիտալսկին, ՀՀ Մշակույթի նախարար՝ Արմեն Ամիրջանը և նախարարի տեղակալ՝ Արևիկ Սամուելյանը, ՀՀ Բնապահպանության նախարարի տեղակալ՝ Խաչիկ Հակոբյանը և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Դենդրոպարկում բացման արարողությանը հաջորդեց դաս-միջոցառում՝ «Դենդրոպարկերի մշակույթը Հայաստանում» խորագրով, որը վարեց «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի գիտության գծով տեղակալ՝ Արթուր Խալաթյանը: Հոկտեմբերի 2-ին Արարատյան Հայրապետակն թեմի «Գրաբարյան օրեր» ծրագիր շրջակներում, Երևանի Պ. Յավորովի անվան դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները, դասղեկ՝ Անահիտ Սարուխանյանի ուղեկցությամբ այցելեցին «Որդան կարմիր» պետական արգելավայր: Արգելավայրում Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցների կողմից խմբի անդամներին ներկայացրեցին որդան կարմիր միջատի զարգացման կենսափուլերը, անդրադառնալով ներկատու միջատի մեզ ժառանգած բացառիկ նմուշների վկայություններին: Իսկ Հոկտեմբերի 7-ին Բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի «Ջրվեժ» անտառապարկում հանդիպեց «Էկոմեդիա ցանցի» լրագրողների հետ: Ոչ ֆորմալ հանդիպման ժամանակ նախարարը ներկայացրեց ոլորտի խնդիրները, դրանց լուծման համար տարվող աշխատանքները և հեռանկարային ծրագրերի հետ կապված ընթացիկ աշխատանքները: Իր խոսքում նախարարը նշեց, որ անհրաժեշտ է հրաժարվել բնական ռեսուրսների այնպիսի շահագործումից ինչը որ չի նպաստում շրջակա միջավայրի վերականգնմանը և բնական ընթացքով վերափոխմանը: «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող «Ջրվեժ» անտառապարկում տեղի ունեցավ էկոկրթական և էկոդաստիարկչական միջոցառում Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի քոլեջի տարբեր կուրսերի սաների հետ: Միջոցառումը անցկացվեց «Բնապահպանական խճանկար» խորագրի ներքո, որին հաջորդեց գեղարվեստի քոլեջի սաների բնապատկերների պատկերումը բնության գրկում: Գեղարվեստի քոլեջի սաներից մի քանիսը իրենց աշխատանքները նվիրեցին «Արգելոցապարկային համալիրին»: «Ջրվեժ» անտառապարկում անցկացվեց նաև էկոկրթական և էկոդաստիարկչական միջոցառում Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի ուսանողների հետ, որը անցկացվեց «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագրի ներքո: Այս միջոցառման ժամանակ ուշագրավ դասախոսություն կարդաց «Արգելոցապարկային համալիրի» տնօրենի գիտության գծով տեղակալը: Համալիրի տնօրինությունը իր առջև խնդիր է դրել իրականացվող միջոցառումները պարբերաբար դարձնել, դրանք հարստացնելով նոր նախագծերով և միջոցառումներով, մասնավորապես՝ էկոկրթական աշխատանքներ հատկապես դպրոցահասակ երեխաների հետ: Ստավորապես այսպիսին էր «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գործունեության ոչ ամբողջական, բայց բեղմնավոր ու հետաքրքիր պատկերը անցնող տարում:

Նյութը՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի Ա.Խալաթյան, Հ.Գրիգորյան

Եթե մարդը ներդաճնակ չէ բնության և իր էության հետ՝ չի կարող ստեղծել, արարել և աղա՝ գոյասել ու զարգանալ



Տեղի է ունեցել բնապահպանական ցուցապատառների մրցույթի ամփոփիչ միջոցառումը

Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանի նկարիչների միության համատեղ կազմակերպած «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» միջոցառման շրջանակներում անցկացվող բնապահպանական ցուցապատառների /պլակատների/ մրցույթի ամփոփիչ միջոցառումը: Կարևորելով մեր երկրում էկոնշակույթի ձևավորման խնդիրը՝ ստորագրվել էր հուշագիր ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանի նկարիչների միության միջև: «Բնապահպանությունը կերպարվեստի լեզվով» խորագրի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Կազմակերպվել է նկարիչների այցը «Խոսրովի անտառ» պետական արգելոց, «Ձրվեծ» անտառապարկ: Նախարարության հովանավորությամբ որոշվել է անցկացնել նաև բնապահպանական ցուցապատառների մրցույթ: Մրցույթին մասնակցել է 26 նկարիչ՝ ներկայացնելով 50 աշխատանք: Ստեղծվել է մրցույթի արդյունքների ամփոփման հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ներկայացուցիչներ Հայաստանի նկարիչների միությունից և ՀՀ բնապահպանության նախարարությունից: Բնապահպանական ցուցապատառների մրցույթում ուշագրավ աշխատանքներ ներկայացնելու համար 20 մասնակից պարգևատրվել է ՀՀ բնա-

պահպանության նախարարության շնորհակալագրով: Մրցույթային հանձնաժողովի կողմից մրցանակների արժանացած 6 մասնակիցների հանձնվել է դրամական պարգևներ: Շնորհավորելով մրցանակակիրներին և շնորհակալություն հայտնելով Հայաստանի նկարիչների միությանը մրցույթի կազմակերպման համար՝ ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը նշել է. «Շրջակա միջավայրի հանդեպ վերաբերմունքը յուրաքանչյուր մարդու բնությունն ու էությունն է, եթե նա ներդաճնակ չէ իր բնության և էության հետ՝ չի կարող ստեղծել, արարել և ընդհանրապես գոյատևել և զարգանալ: Եթե դու սպառողական հոգեբանությամբ ես մոտենում՝ բնությունը պատժելու է, եթե դու այն դիտարկում ես որպես քո էության մի մասը, այն միջավայրը որտեղ դու և քո սերունդները պետք է կարողանան արարել և առաջ գնալ, ապա բնությունը կտա քեզ այդ հնարավորությունը»: ՀՀ բնապահպանության նախարարը հաջողված է համարել ցուցապատառի լեզվով բնապահպանական խնդիրների ներկայացման մեկնարկը, ինչը նախադրյալներ է ստեղծել նման միջոցառումների շարունակականության համար: «Եթե ոչ նկարիչները, ապա ով պետք է ստեղծագործության լեզվով ներկայացնի բնապահպանական հիմնախնդիրները», - շնչել է Արծվիկ Մինասյանը և վստահություն հայտնել, որ հանրապետությունում տարածվելիք ցուցապատառներով հասարակությունը մասնակից է լինելու բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը: Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ բնապահպանության նախարարությանը՝ ոլորտի նկատմամբ հոգատար վերաբերմունք ցուցաբերելու համար և կարևորել ցուցապատառի միջոցով բնապահպանական խնդիրների վերհանման առաջին փորձը: Միջոցառման ընթացքում ծավալվել է մրցույթային հանձնաժողովի անդամների կարծիքների քննարկում, շնորհակալակական խոսքով հանդես են եկել մրցանակակիրները:

Աշունը այնքան գույներ է վառել...



Դեկտեմբերի 1-ին Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի ունեցավ «Մեր աշունը» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսի հեղինակներն են Վահե Բաղումյանը և Նարե Հախնազարյանը, նրանք ուսանում են Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում: Աշուն, եղանակ, որը պայծառ է, գունագեղ, բայց միևնույն ժամանակ միստիկ և տխուր: Եղանակ, որի ժամանակ բնությունը դառ-

Հայաստանի բնության պետական թանգարանում տեղի ունեցավ «Մեր աշունը» խորագիրը կրող ցուցահանդեսի բացումը

նում է աննկարագրելի գեղեցիկ ստեղծելով կտավային նրբաճաշակություն և այս ամենի մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում անուշահամ, մեղրածոր մրգերը: Ցուցահանդեսը, կարծես, ամփոփում լինել աշնան գունագեղության, մրգերի առատության: Վահե Բաղումյանին և Նարե Հախնազարյանին Հայաստանի բնության պետական թանգարանի կողմից շնորհվեց շնորհակալագիր, որը հանձնեց թանգարանի տնօրեն տիկին Գայանե Ղազարյանը:

Նախագիծը՝ Արծրուն Պեղանյանի
խմբագիր՝ Սանվել Սևրջյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517